ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

ՀՐԱՄԱՆ

«08» 09 2024 թ. Երևան № 24-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ ՏՆՕՐԻՆՎՈՂ ԳԱՂՏՆԱԳՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴԼԱՅՆՎԱԾ ԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Պետական գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետի պահանջները և ղեկավարվելով «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով՝

Հրամայում եմ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն կոմիտեի կողմից տնօրինվող գաղտնագրման ենթակա տեղեկությունների ընդլայնված գերատեսչական ցանկը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Արդարադատության երրորդ դասի
պետական խորհրդական *Ս. Խաչատրյան*

Հավելված
Հայաստանի Հանրապետության
հակակոռուպցիոն կոմիտեի
2024 թվականի օգոստոսի 08 -ի
թիվ 24 -Լ հրամանի

ԸՆԴԼԱՅՆՎԱԾ ԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՑԱՆԿ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ ՏՆՕՐԻՆՎՈՂ ԳԱՂՏՆԱԳՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Հ/Հ	Գաղտնագրման ենթակա տեղեկությունների անվանումը	Գաղտնիության աստիճանը
1	2	3
	1.ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ,ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԲՆԱԳԱՎԱՌԻ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	
1 (25)	ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի քաղաքացիական պաշտպանության պլանների մասին տեղեկություններ	ԳԱՂՏՆԻ
	2. ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ, ԱՐՏԱՔԻՆ ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ, ՀԱԿԱՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ, ՕՊԵՐԱՏԻՎ-ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	
2 (38)	ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի օպերատիվ-հետախուզական վարչության աշխատանքի կազմակերպման համակարգը, օպերատիվ-տեխնիկական բաժնի կառուցվածքը, միջոցները, մեթոդները և ծրագրերը բացահայտող տեղեկությունները	ՀՈՒՅԺ ԳԱՂՏՆԻ
3 (38)	Օպերատիվ-հետախուզական գործունեության ուժերի, միջոցների, աղբյուրների, մեթոդների, պլանների և արդյունքների, ինչպես նաև այդ գործունեության ֆինանսավորման մասին տվյալները, եթե դրանք բացահայտում են թվարկված տեղեկությունները	ՀՈՒՅԺ ԳԱՂՏՆԻ
4 (38)	ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի օպերատիվ-հետախուզական վարչության կողմից իրականացվող օպերատիվ-հետախուզական միջոցառումների անցկացման և արդյունքների մասին տեղեկությունները	ՀՈՒՅԺ ԳԱՂՏՆԻ
5 (38)	ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի օպերատիվ-հետախուզական վարչության կողմից օպերատիվ-հետախուզական գործունեության ֆինանսավորման ծախսերի, հատկացումների և հաշվետվությունների մասին տեղեկությունները	ՀՈՒՅԺ ԳԱՂՏՆԻ
6 (38)	ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի օպերատիվ-հետախուզական վարչության կառուցվածքային ստորաբաժանումների անձնակազմի ցուցակային կամ հաստիքային թվաքանակի, դրանցում կատարված փոփոխությունների և լրացումների, պաշտոնների անվանացանկի մասին տեղեկությունները	ԳԱՂՏՆԻ
7 (38)	ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի օպերատիվ-հետախուզական վարչության գաղտնի ստորաբաժանման հաստիքացուցակի, կառուցվածքի, տեղակայման և գործունեության մասին տեղեկությունները	ՀՈՒՅԺ ԳԱՂՏՆԻ
8 (38)	ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների (աշխատողների) անձնական գործերը (գաղտնի մասի առկայության դեպքում) և ծառայողների (աշխատողների) անձնական տվյալները	ԳԱՂՏՆԻ
9 (38)	ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի զենքի, ռազմամթերքի, անձնական պաշտպանության հատուկ միջոցների քանակի, տեսակի, ձեռքբերման և պահպանության մասին տեղեկությունները	ԳԱՂՏՆԻ

10 (38)	ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի օպերատիվ-հետախուզական ստորաբաժանմանը հատկացված տրանսպորտային միջոցների, զենքի, ռազմամթերքի և այլ նյութատեխնիկական միջոցների առկայության, քանակի, որակի և վիճակի վերաբերյալ տեղեկությունները	ՀՈՒՅԺ ԳԱՂՏՆԻ
11 (39)	Օպերատիվ-հետախուզական միջոցառումների անցկացման ընթացքում օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների ուժերի, միջոցների ու աղբյուրների, մեթոդների, պլանների, այդ միջոցառումների արդյունքների, դրանց ֆինանսավորման, օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների հաստիքային գաղտնի աշխատակիցների, ինչպես նաև այդ մարմինների հետ գաղտնի հիմունքներով համագործակցող և համագործակցած անձանց վերաբերյալ տեղեկություններ	ՀՈՒՅԺ ԳԱՂՏՆԻ
12 (39)	ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի օպերատիվ-հետախուզական վարչության և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների կողմից իրականացվող օպերատիվ-հետախուզական միջոցառումների անցկացման և արդյունքների մասին տեղեկությունները	ՀՈՒՅԺ ԳԱՂՏՆԻ
13 (39)	ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի օպերատիվ-հետախուզական վարչության կողմից օպերատիվ-հետախուզական միջոցառումների անցկացման տեղի և ժամկետների մասին տեղեկությունները	ՀՈՒՅԺ ԳԱՂՏՆԻ
14 (39)	ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի օպերատիվ-հետախուզական վարչության հետ գաղտնի հիմունքներով համագործակցող անձանց տեղաբաշխման և քանակի մասին տեղեկությունները	ՀՈՒՅԺ ԳԱՂՏՆԻ
15 (40)	ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի օպերատիվ-հետախուզական վարչության կողմից օպերատիվ-հետախուզական գործունեության իրականացման ընթացքում օգտագործվող հատուկ տեխնիկական միջոցների, պահման վայրի, դրանց մարտավարատեխնիկական տվյալների, օգտագործման կարգի և օգտագործման կոնկրետ փաստերի մասին տեղեկությունները	ՀՈՒՅԺ ԳԱՂՏՆԻ
16 (41)	ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի հետ գաղտնի հիմունքներով համագործակցող կամ համագործակցած անձանց քանակի, տեղաբաշխման, ֆինանսավորման վերաբերյալ տեղեկությունները	ՀՈՒՅԺ ԳԱՂՏՆԻ
17 (41)	ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի օպերատիվ-հետախուզական վարչության հաստիքային գաղտնի աշխատակիցների, այդ վարչության հետ գաղտնի հիմունքներով համագործակցող կամ համագործակցած անձանց մասին տեղեկությունները	ՀՈՒՅԺ ԳԱՂՏՆԻ